

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին նիստի անդամները և «Հույսի Մեծամոր» հասարակական կազմակերպության նախագահ Մարգարիտ Սեդրակյանը և «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Նաիրա Առաքելյանը:

Օրակարգում՝

1. Մարզում ներառական կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքը:

/Զեկ՝ Գ. Սայադյան/

2. «Հույսի Մեծամոր» և «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի ներկայացում և քննարկում:

/Զեկուցողներ՝ Մ. Սեդրակյան, Ն. Առաքելյան/

Օրակարգի առաջին հարցի հետ կապված տիկին Գ. Սայադյանը ներկայացրեց մարզում ներառական կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքը: Տիկին Սայադյանը նշեց, որ 2015 թվականի ընթացքում Արմավիր մարզի 18 հիմնական դպրոցներում կազմակերպվել է 537 երեխայի ներառական կրթություն, հավելելով, որ 2016թ. ավարտին արդեն 1384 երեխայի ներառական կրթությունը կազմակերպվելու է 51 հիմնական դպրոցներում:

Օրակարգի 2-րդ հարցի հետ կապված՝ Մ. Սեդրակյանն ու Ն. Առաքելյանը հերթով ներկայացրեցին իրենց ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերը: Մ. Սեդրակյանը նշեց, որ սույն թվականի ապրիլ ամսից համագործակցում են «Արմավիրի Զարգացման Կենտրոն» հասարակական կազմակերպության հետ, որը ստեղծել է երեխաների սոցիալական աջակցության կենտրոն և ժամանակավորապես այն գործում է Մեծամորի քաղաքապետարանի կողմից «Հույսի Մեծամոր» ՀԿ-ին տրամադրած տարածքում: Ն. Առաքելյանը ներկայացրեց 2016թ. ընթացքում իրականացվելիք ծրագրերը, այն է՝

«Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» եռամյա ծրագիրը, որը ֆինանսավորվելու է Սեյվ դը չիլդրեն կազմակերպության կողմից և սկսվել է իրականացվել 2016թ. հունվարից և

«Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիրը, որը կրկին իրականացվելու է Սեյվ դը չիլդրենի հետ համագործակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ և որի նպատակն է կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ

հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ աջակցելով նրանց աշխատանքի տեղավորմանը:

Մարգարետի տեղակալ՝

Արձանագրող՝ Հ. Հարությունյան

Լ.Մուրադյան